պատրաստեցին հայ ժողովուրդի համար, կոտորելով նրանց եւ աւաղուտ անապատները քշելով:

Այս եւ նման մտքեր է յարուցում եւ պաշտպանում Մարքվարտ շատ անգամներ, երբ առիթ է լինում նրա հետ նաեւ մասնաւոր խօսակցութիւնների միջոցով շօշափել իրեն եւ մեզ յուզող ցաւոտ խնդիրներ: Եւ նա ոչ միայն դէմ չէ, այլ եւ կ'ուզէր, որ իր այս մտքերը մամուլի միջոցով հայ հասարակութեան ծանօթ դառնան:

Դժուար չէ սակայն դիտել տալ Մարքվարտին — եւ դա արել եմ առիթ եղած ժամանակ — որ նա իր՝ հայ ժողովրդի ճակատագրի մասին սնուցած զաղափարներով եւ խոհերով, ինչպէս նաեւ Տաճկաստանի ու Թրքութեան վերաբերմամբ ունեցած քաղաքական հեռանկարներով՝ զգալիօրէն վիպական աշխարհն է թեւակոխում: Նա իր ցանկութիւնները եւ փափաքները մէկ եւ միւս տեսակէտից խտացնելով ու նրանց արդարութեանը եւ ճշմարտութեան խորը համոզուած՝ իրականութիւն կամ կարելիութիւն է սեպում եւ ըստ այնմ գծում որդեգրելիք քաղաքականութիւնը:

Նա մոռանում է, որ այսօրուան եւ 1919–20–ի քաղաքական պայմանները բոլորովին տարբեր են եւ հայութիւնն ուժերը շատ են տասանորդուած, կարենալ իրագործելու համար արդարութեան եւ ճշմարտութեան համապատասխանող իր իրաւունքը: Նա մոռանում է, որ այսօր աւելի քան երբեք արդարանում է — թո՛ղ լինի նա դաժան եւ դաժանօրէն ասուած —Բիսմարկի այն խօսքը թէ՝ ամէն իրաւունքից առաջ է գնում ոյժը: Իսկ այդ ոյժն է, որ պակասում է հայ ժողովուրդին՝ իրականացնելու համար արդարութիւնից բխող իր դէթ նուազագոյն իրաւունքը, ո՛ւր մնաց՝ առաւելագոյնը:

Մարքվարտ — նրա հետ միասին եւ շա՛տ շատերը մեզնում — մոռանում է, որ այսօր հայութիւնը օղակուած է եւ կծկուած, լքուած բոլորից եւ ամէնքից, տմարդօրէն դաւաճանուած նաեւ այն բոլոր «դաշնակիցներից», որոնց ձեռքով նա 1919–ին արդարադատութիւնը յաղթանակել կարծում էր: Իսկ այդ «դաշնակից»ների վերջին շարքերի մէջ չէ որ գտնուում է նաեւ — Ռուսաստանը:

Մարքվարտ — այդ լաւատես, միամիտ գիտնականը եւ առանձնասենեակի մարդը — պարզապէս ըմբռնել չէ կարող, թէ ինչպէս է Ռուսաստանը — թէկուզ կարմիր քղամիտ հագած — բարեկամութեան ձեռք է մեկնել Թիւրքիային: Չէ՞ որ նա այդպիսով ուժեղացնում է վերջինիս եւ դիւրացնում նրա վաղուան ծաւալումը դէպի Կովկաս եւ Թուրքիստան, փորելով սեփական իշխանութեան եւ գոյութեան հիմերը: Ուղղակի անկարելի բան է թւում այս ամէնը Մարքվարտի մտածողութեան համար:

Եւ սակայն դա ոչ միայն կարելի բան է, այլ եւ իրողութիւն է՝ տարիներից ի վեր: Աւելին դեռ: Ոչ միայն Ռուսիան, այլ եւ — երէկ կամ այսօր — նոյն Թիւրքիան սիրաշահելու համար նրա հանդէպ հիմնովին փոխել են իրենց քաղաքականութիւնը նաեւ միւս մեծ պետութիւնները — Ֆրանսան, Անգլիան, եւայլն: Դարաւոր ոսոխները՝ Անգլիա եւ Ռուսիա՝ ամէն բան տալ պատրաստ են Տաճկաստանին, իրենց հետ ունենալու համար նրան:

Այս՝ եւ սրա նման շատ իրողութիւններն են — որչափ եւ դառն մեզ համար — որ մոռացութեան տալ չէ կարող հայ ազգային քաղաքականութիւնը: Այս ամէնը չպիտի մոռանայ Մարքվարտ, որ հնարաւոր է համարում Թրքութիւնը Կրասնօձարսկ տեղափոխել... ռուսների ձեռքով, այն էլ՝ հայ ազգի սիրուն աչքերի համար:

Այդպէս դատողը ի՞նչպէս հաւատայ — նա չի էլ ուզում հաւատալ — որ անգամ Նախիջեւանը Հայաստանից խլուած է, որ Մասիսն այսօր տաճկական է, որ տաճիկ սահմանապահ զօրքերը Էջմիածնից ընդամէնը 12–13 քիլոմետր հեռու են կանգնած եւ պատեհ առթիւ հրամանի են սպասում:

«Հապա Էջմիածնի ձեռագիրնե՞ը»:

Հապա երեքհազարամեայ հայ ժողովո՞ւրդը:

Երբ այսպիսի հարց է դրուած հայ ազգային քաղաքականութեան առաջ, երբ շատ որոշ են նրա սեփական ուժերը, նա կարո՞ղ է, իրաւունք ունի՞ անտես անելու դաժան իրականութիւնը, որ միակ ելակէտն է ամէն մի քաղաքականութեան առհասարակ:

(Վերջ)